Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
ապրիլի 4-ի N 478-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՎԵՐԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են քաղաքաշինության բնագավառում բազային մասնագիտական կրթություն ունեցող անձանց մասնագիտական վերաորակավորման ընդհանուր պայմաններին և իրականացմանը ներկայացվող հիմնական պահանջները:

2. Սույն կարգի դրույթները տարածվում են բակալավրի կամ մագիստրոսի մասնագիտական կրթական այն ծրագրերի վրա, որոնք համադրելի են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի N 2 հավելվածի N 1 աղյուսակով սահմանված հավաստագրման ենթակա մասնագիտությունների հետ (այսուհետ՝ հավաստագրման ենթակա մասնագիտություն):

3. Սույն կարգին համապատասխան մասնագիտական վերաորակավորման կրթական ծրագրի դասընթացներն ավարտած և վկայական ստացած անձը կարող է համապատասխան հավաստագրման ենթակա մասնագիտությամբ շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ՝ ՇՄԶ) հավաստագիր ձեռք բերել, եթե ապահովել է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11.4-րդ հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված պահանջները:

2. ՎԵՐԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

4. Վերաորակավորման կրթական ծրագրերին կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետությունում սույն հավելվածի 14-րդ կետով սահմանված աղյուսակում ընդգրկված բազային մասնագիտական բակալավրի կամ մագիստրոսի որակավորման աստիճան ստացած անձինք, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կողմից սահմանված կարգով ճանաչված համապատասխան բազային մասնագիտական բակալավրի կամ մագիստրոսի որակավորման աստիճան ունեցող անձինք:

5. Քաղաքաշինության բնագավառում բազային կրթական ծրագրերը, մասնագիտությունները, համապատասխան դասիչները և դրանց համապատասխան վերաորակավորման կրթական ծրագրերը ներկայացված են սույն հավելվածի 14-րդ կետով սահմանված աղյուսակում:

6. Ակադեմիական կրեդիտը ուսումնական բեռնվածության չափման՝ ժամաքանակով արտահայտվող պայմանական միավոր է: Վերաորակավորման կրթական ծրագրերի մեկ կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

7. Վերաորակավորման կրթական ծրագրերն իրականացվում են վճարովի սկզբունքով: Ուսման վճարի չափը սահմանում է համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունը (այսուհետ՝ բուհ):

8. Վերաորակավորման գործընթացը կազմակերպվում և իրականացվում է բուհի կողմից սույն հավելվածով սահմանած պահանջներին համապատասխան:

9. Դիմորդները հրամանագրվում են որպես բուհի ունկնդիր՝ վերաորակավորման կրթական ծրագրի համար սահմանված գումարը վճարելուց և բուհի հետ համապատասխան պայմանագիր կնքելուց հետո:

10. Վերաորակավորման կրթական ծրագրերը կազմվում են՝ ելնելով մասնագետների բազային կրթության և վերաորակավորման արդյունքում ձեռք բերվող մասնագիտության կրթական ծրագրերի մասնագիտական առարկայական տարբերությունների ծավալից:

11. Վերառրակավորման կրթական ծրագրերը հաջողությամբ ավարտած անձանց տրվում է բուհի կողմից մշակված և հաստատված վկայական և ներդիր: Դրանցում պարտադիր կատարվում է նշում ունկնդրի ուսումնառության արդյունքների և կրեդիտների մասին: Վկայականի ներդիրը համարվում է վկայականի անբաժանելի մասը և առանց վկայականի վավեր չէ:

12. Վկայականը և ներդիրը վավերացվում են բուհի ռեկտորի ստորագրությամբ և կնիքով:

13. Վերառրակավորման կրթական ծրագրերը հաջողությամբ ավարտած անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հնգօրյա ժամկետում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե:

14. Քաղաքաշինության բնագավառում բազային մասնագիտությունների, կրթական ծրագրերի և դրանց համապատասխան վերարտադրակավորման կրթական ծրագրերի աղյուսակ

Հ/Հ	Բազային մասնագիտությունը և կրթական ծրագիրը				Վերարտադրակավորման կրթական ծրագիրը	
	ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշում		**ՀՀ ԿԳՆ 2015 թ. հուլիսի 3-ի 647-Ա/Ք հրաման**		**ՀՀ ԿԳՆ 2015թ. հուլիսի 3-ի 647-Ա/Ք հրաման**	
	Մասնագիտության անվանումը	**Դասիչը (ծածկագիրը)**	**Կրթական ծրագրի անվանումը**	**Դասիչը (ծածկագիրը)**	**Կրթական ծրագրի անվանումը**	**Դասիչը (ծածկագիրը)**
	1	**2**	**3**	**4**	**7**	**8**
1	Շինարարական ճարտարագիտություն	073201.00.6	Արդյունաբերական, քաղաքացիական շինարարություն և կոնստրուկցիաների նախագծում	073201.01.6	Հիդրոտեխնիկական և հիդրոէներգետիկ կառուցվածքներ	073201.10.6
					Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում, շինարարություն, կառավարում	073201.03.06
					Ավտոճանապարհներ, կամուրջներ, թունելներ	073201.09.6
2	Շինարարական ճարտարագիտություն	073201.00.6	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում, շինարարություն, կառավարում	073201.03.06	Շինանյութերի, կառույցների ճարտարագիտություն և տեխնիկական փորձաքննություն	073201.01.6

3	Շինարարական ճարտարագիտություն	073201.00.6	Շենքերի նախագծում	073201.08.6	Արդյունաբերական, քաղաքացիական շինարարություն և կոնստրուկցիաների նախագծում	073201.01.6
4	Շինարարական ճարտարագիտություն	073201.00.6	Ավտոճանապարհներ կամուրջներ, թունելներ	073201.09.6	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում, շինարարություն, կառավարում	073201.03.06
					Շինանյութերի կառույցների ճարտարագիտություն և տեխնիկական փորձաքննություն	073201.02.6
					Հիդրոտեխնիկական և հիդրոէներգետիկ կառուցվածքներ	073201.10.6
5	Շինարարական ճարտարագիտություն	073201.00.6	Հիդրոտեխնիկական և հիդրոէներգետիկ կառուցվածքներ	073201.10.6	Ավտոճանապարհներ, կամուրջներ, թունելներ	073201.09.6
					Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում, շինարարություն, կառավարում	073201.03.06
					Շինանյութերի կառույցների ճարտարագիտություն և տեխնիկական փորձաքննություն	073201.02.6
6	Քաղաքային տնտեսություն	073102.00.6	Ջերմագազամատակարարում և օդափոխություն	073102.02.6	Շինանյութերի կառույցների ճարտարագիտություն և տեխնիկական փորձաքննություն	073201.02.6

7	Էներգետիկա	071301.00.6	Էլեկտրաէներգետիկա	071301.03.6	Ռադիոտեխնիկա	071403.01.6 071403.02.6
					Հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգերի մշակում	071403.03.6
					Ջերմագազամատակարարում և օդափոխություն	073102.02.6
8	Էներգետիկա	071301.00.6	Ջերմաէներգետիկա	071301.03.6	Ջերմագազամատակարարում և օդափոխություն	073102.02.6
					Էլեկտրաէներգետիկա	071301.00.6
9	Ռադիոտեխնիկա և կապ	071403.00.6	Ռադիոտեխնիկա	071403.02.6	Հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգերի մշակում	071403.03.6
					Էլեկտրաէներգետիկա	071301.00.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ